

Ծանուցագիր Աշխատողներին

Այս գործատուն գրանցված է Զբաղվածության Զարգացման Վարչությունում EDD, ինչպես պահանջվում է Կալիֆոռնիա Նահանգի Գործազրկության Ապահովագրության Կանոնագրով, էլ EDD-ին զեկուցում է աշխատավարձի փոխհատուցումների մասին, որոնք կուտակվել են ձեզ համար՝ որպես ստորև նշվածների հիմք

UI

Գործազրկության ապահովագրություն

(ամբողջությամբ ֆինանսավորվում է գործատուների հարկերի հաշվին)

Գործազրկության ապահովագրությունը (Unemployment Insurance, UI) վճարվում է ձեր գործատուի կողմից և տրամադրում է եկամտի մասնակի փոխհատուցում, երբ դուք գործազուրկ եք, կամ եթե ձեր աշխատանքային ժամաքանակը կրճատվել է ոչ ձեր մեղքով: UI նպաստների վճարումներ պահանջելու համար պետք է նաև բավարարեք UI իրավունակության պահանջները, ներառյալ այն, որ պետք է լինեք աշխատանքի համար հասանելի և փնտրեք աշխատանք:

Ինչպես ներկայացնել նոր UI հայց

Օգտվեք հետևյալ եղանակներից որևէ մեկից՝

- **Առցանց.** UI OnlineSM-ը UI հայց ներկայացնելու ամենաարագ և ամենահարմար միջոցն է: Սկսելու համար այցելեք [UI Online](http://edd.ca.gov/UI_Online) (edd.ca.gov/UI_Online):

- **Հեռախոս.** Ներկայացուցիչները հասանելի են հետևյալ անվճար համարներով, երկուշաբթիից ուրբաթ, ժամը 8:00-ից մինչև 12:00 (Մտանդարտ խաղաղօվկիանոսյան ժամանակով), բացի պետական ոչ աշխատանքային օրերից:

Անգլերեն	1-800-300-5616	Կանտոներեն	1-800-547-3506	Վիետնամերեն	1-800-547-2058
Իսպաներեն	1-800-326-8937	Մանդարին	1-866-303-0706	Հեռատիպ (TTY)	1-800-815-9387

- **Ֆաքս կամ փոստ.** Հայց ներկայացնելու նպատակով UI Online մուտք գործելիս որոշ հաճախորդներ հրահանգ կստանան իրենց UI դիմումը EDD-ին ուղարկել ֆաքսով կամ փոստով: Այդ դեպքում կցուցադրվի *Unemployment Insurance Application*, (DE 11011): Ավելի արագ և անվտանգ մշակման համար, ֆաքսով լրացված ձևն ուղարկեք ձևաթղթում նշված համարով: Ձեր UI դիմումը փոստով ուղարկելու դեպքում օգտագործեք ձևաթղթում նշված հասցեն և լրացուցիչ ժամանակ նախատեսեք մշակման համար:

Կարևոր է. UI հայցի ներկայացումը ուշացնելը կարող է հետաձգել նպաստների վճարումները:

DI

Հաշմանդամության ապահովագրություն

(ամբողջությամբ ֆինանսավորվում է աշխատողների մուծումների հաշվին)

Հաշմանդամության ապահովագրությունը (Disability Insurance, DI) ֆինանսավորվում է աշխատողների մուծումների հաշվին և աշխատավարձի մասնակի փոխհատուցման նպաստներ է տրամադրում այն իրավունակ կալիֆոռնիացիներին, ովքեր չեն կարող աշխատել աշխատանքին չառնչվող հիվանդության, մարմնական վնասվածքի, հղիության կամ հաշմանդամության պատճառով:

Ձեր գործատուն պետք է *Disability Insurance Provisions* (DE 2515) (Հաշմանդամության ապահովագրության դրույթներ) գրքուկը տրամադրի նոր վարձված աշխատողներին և յուրաքանչյուր աշխատողի, ով չի կարող աշխատել աշխատանքին չառնչվող հիվանդության, մարմնական վնասվածքի, հղիության կամ հաշմանդամության պատճառով:

Ինչպես ներկայացնել նոր DI հայց

Օգտվեք հետևյալ եղանակներից որևէ մեկից՝

- **Առցանց.** SDI Online-ը հայց ներկայացնելու ամենաարագ և ամենահարմար միջոցն է: Սկսելու համար այցելեք [SDI Online](http://edd.ca.gov/SDI_Online) (edd.ca.gov/SDI_Online):

- **Փոստ.** EDD-ին փոստով հայց ներկայացնելու համար լրացրեք և ուղարկեք *Claim for Disability Insurance (DI) Benefits* (DE 2501) (Հայց հաշմանդամության ապահովագրության նպաստների համար) ձևը: Կարող եք հայցի տպագիր ձևաթուղթ ստանալ ձեր գործատուից, բժշկից կամ թերապևտից՝ այցելելով Հաշմանդամության պետական ապահովագրության (State Disability Insurance) գրասենյակ, առցանց՝ [EDD Forms and Publications](http://edd.ca.gov/Forms) (edd.ca.gov/Forms) կայքէջից, կամ զանգահարելով 1-800-480-3287 հեռախոսահամարով:

Ծանոթություն. Եթե գործատուն DI ապահովագրության համար վարում է հաստատված Կամավորական սխեմա, աջակցության համար դիմեք ձեր գործատուին:

DI-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք State Disability Insurance (edd.ca.gov/disability) կամ զանգահարեք 1-800-480-3287.

Նահանգի պետական ծառայողները պետք է զանգահարեն 1-866-352-7675 համարով:

TTY (միայն խուլ կամ թույլ լսողությամբ անհատների համար) հասանելի է 1-800-563-2441 համարով:

PFL

Վճարովի ընտանեկան արձակուրդ

(ամբողջությամբ ֆինանսավորվում է աշխատողների մուծումների հաշվին)

Վճարովի ընտանեկան արձակուրդը (Paid Family Leave, PFL) ֆինանսավորվում է աշխատողների մուծումների հաշվին և աշխատավարձի մասնակի փոխհատուցման նպաստներ է տրամադրում այն իրավունակ կալիֆոռնիացիներին, ում հարկավոր է արտարձակուրդ՝ ծանր հիվանդ երեխային, ծնողին, ամուսնու կամ կնոջ ծնողին, տատիկին կամ պապիկին, թոռնիկին, քրոջը կամ եղբորը, ամուսնու կամ կնոջը կամ գրանցված քաղաքացիական գուզրնկերոջը խնամելու համար: Նպաստները մատչելի են այն ծնողներին, ում արտարձակուրդ է անհրաժեշտ ծննդյան, որդեգրման կամ հովանավորյալ խնամքի հանձնելու միջոցով ընտանիք մտած նոր երեխայի հետ կապվելու համար: Նպաստները հասանելի են նաև իրավունակ կալիֆոռնիացիների համար, որոնց անհրաժեշտ է արտարձակուրդ՝ մասնակցելու որակավորման միջոցառումներին՝ կապված ամուսնու, գրանցված քաղաքացիական գուզրնկերոջ, ծնողի կամ այլ երկրում երեխայի զինվորական ծառայության հետ:

Ձեր գործատուն պետք է *Paid Family Leave* (DE 2511) (Վճարովի ընտանեկան արձակուրդ) գրքուկը տրամադրի նոր վարձված աշխատողներին և յուրաքանչյուր աշխատողի, ով արտարձակուրդ է վերցնում ընտանիքի ծանր հիվանդ անդամին խնամելու, նոր երեխայի հետ կապվելու կամ զինվորական որակավորման միջոցառմանը մասնակցելու համար:

Ինչպես ներկայացնել նոր PFL հայց

Օգտվեք հետևյալ եղանակներից որևէ մեկից՝

- **Առցանց.** SDI Online-ը հայց ներկայացնելու ամենաարագ և ամենահարմար միջոցն է: Սկսելու համար այցելեք [SDI Online](http://edd.ca.gov/SDI_Online) (edd.ca.gov/SDI_Online):

- **Փոստ.** EDD-ին փոստով հայց ներկայացնելու համար լրացրեք և ուղարկեք *Claim for Paid Family Leave (PFL) Benefits* (DE 2501F) (Հայց վճարովի ընտանեկան արձակուրդի նպաստների համար) ձևը: Կարող եք հայցի տպագիր ձևաթուղթ ստանալ ձեր գործատուից, բժշկից կամ թերապևտից՝ այցելելով Հաշմանդամության պետական ապահովագրության (State Disability Insurance) գրասենյակ, առցանց՝ [EDD Forms and Publications](http://edd.ca.gov/Forms) (edd.ca.gov/Forms) կայքէջից, կամ զանգահարելով 1-877-238-4373 հեռախոսահամարով:

Ծանոթություն. Եթե գործատուն PFL ապահովագրության համար վարում է հաստատված Կամավորական սխեմա, աջակցության համար դիմեք ձեր գործատուին:

PFL-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք State Disability Insurance (edd.ca.gov/disability) կամ զանգահարեք 1-877-238-4373:

Նահանգի պետական ծառայողները պետք է զանգահարեն 1-877-945-4747 համարով:

TTY (միայն խուլ կամ թույլ լսողությամբ անհատների համար) հասանելի է 1-800-445-1312 համարով:

Ծանոթություն: Որոշ աշխատողներ կարող են ազատված լինել վերը նշված ապահովագրական ծրագրերով տրամադրվող ապահովագրությունից: Նպաստներ հայցելու նպատակով կեղծ հայտարարություն անելը կամ փաստերը չներկայացնելը արգելվում է օրենքով: Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք EDD (edd.ca.gov):